

Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության 2023 թվականի կանոնադրական և ֆինանսական գործունեության սուբյեկտների վերաբերյալ

Վերահսկիչ հանձնաժողովը համաձայն «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության կանոնադրության՝

1. իրականացրել է Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի ընթացիկ գործունեության և նրանց կողմից սույն կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը,
2. վերահսկել է համաժողովի և արհկոմիտեի որոշումների կատարումը,
3. անց է կացրել արհկոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության, Կազմակերպության միջոցների և նյութական արժեքների հաշվապահական հաշվառման ու պահպանման, նախահաշիվների կազմման և կատարման, կատարված ծախսերի նպատակահարմարության, ֆինանսական և այլ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության փաստաթղթային ստուգում:

Իրականացրած վերահսկողության արդյունքում Վերահսկիչ հանձնաժողովը արձանագրել է.

- 1) Կազմակերպության ֆինանսական և նյութական միջոցները օգտագործվել են ճիշտ և արդյունավետ:
- 2) Կազմակերպության բյուջեի կատարողականը ճիշտ է արտացոլում ստացված մուտքերը և իրականացված ծախսերը:
- 3) Հիմնականում Կազմակերպության անդամավճարները փոխանցվել են ժամանակին:
- 4) Ճիշտ է կազմակերպված և իրականացված Կազմակերպության գործավարությունը, Կազմակերպության անդամների հաշվառումն ու Կազմակերպության փաստաթղթերի պահպանումը:
- 5) Ժամանակին դիտարկվել են Կազմակերպության անդամների դիմումները:
- 6) Կազմակերպության ծրագրերը իրականացվել են համաձայն ««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության ծրագրերի կանոնակարգ»-ի:

Վերահսկիչ հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Իսրայելյան

Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ՝

Ս. Հայրապետյան

Ժ. Մղումյան